ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան, Արգիշտիի 1

№ 01/1213 «27» 12 2017թ.

«ԵՐՊԵՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Երևանի քաղաքապետարանի և «Երպետ» ՍՊ ու «ԱՏԼԱՆՏ» ՍՊ ընկերությունների (Կոնսորցիում) (այսուհետ՝ Վաճառող) միջև 23.10.2017 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի»:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանված՝ 15.12.2017 թվականը:

Պայմանագրի 8.14 կետով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետի 22.01.2016 թվականի N 38-Ա կարգադրությամբ ստեղծված մասնագիտական խումբը (այսուհետ՝ մասնագիտական խումբ) ս/թ դեկտեմբերի 15-ին այցելել է արտադրամաս՝ ուսումնասիրելու պատրաստվող տեղեկատվության աջակցության և սպասարկման համար նախատեսված կրպակը: Այցի ժամանակ ի հայտ են եկել մի շարք թերություններ, որոնք ներկայացվել են 20.12.2017թ. 04/28276 գրությամբ Ձեզ /գրությունը փոխանցվել է առձեռն «Երպետ» ՍՊԸ-ի աշխատակից Ա. Վանյանին, նաև ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով erpet.erpet@mail.ru էլեկտրոնային հասցեին/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված գնման առարկայի մատակարարման ժամկետը՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով Պայմանագրի 2.1.5 կետով, համաձայն որի՝ «Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը», առաջարկել է մինչև 25.12.2017 թվականը մատակարարել Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը և վճարել 6.2 կետով նախատեսված տույժը:

Տեղեկացնում եմ, որ «Երպետ» ՍՊԸ-ի աշխատակից Ա. Վանյանին բանավոր ներկայացվել է մասնագիտական խմբի կողմից մատնանշված թերությունները շտկելու համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը, որը նաև ուղարկվել է erpet.erpet@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Մասնագիտական խմբի անդամները կրկին այցելել են Վաճառողի արտադրամաս, որտեղ արձանագրել են, որ չնայած մեր կողմից ներկայացված թերությունների որոշակի մասի շտկմանը, այնուամենայնիվ, տեղեկատվության աջակցության և սպասարկման համար

նախատեսված կրպակը ամբողջական տեսք չի ունեցել, բոլոր դետալները և դեկորատիվ էլեմենտները հավաքված վիճակում չեն եղել, նոր մշակման և ներկման փուլում են գտնվել, տանիքն իր բոլոր գրվածքներով և դեկորատիվ էլեմենտներով հավաքված չի եղել, INFO-ի շրջանակը բացակայել է և առհասարակ չի ներկայացվել մասնագիտական խմբի անդամներին, բարձրացված չեն եղել երկաթյա շերտավարագույրները, որպեսզի կրպակի ամբողջական տեսքը տեսանելի լինի /կից ներկայացվել են համապատասխան լուսանկարները/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վաճառողը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ առաջարկում եմ Պայմանագրի 6.2 կետով հաշվարկված տույժի գումարը վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին, ինչպես նաև՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Գ.Մուրադյան
011 514-373